ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 05.12.2019թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 06.12.2019թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1

<<Հարգելի պատվիրատու,
Խնդրում ենք պարզաբանել
Համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշումով Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21 կետի ը. ենթակետի

ը. կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

Ձեր կողմից հրավերում մատակարարարման ժամկետ է նշվել
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում:
Արդյոք չկա սխալմունք կամ վրիպակ:

Կանխավ շնորհակալություն:>>

Պարզաբանում N 1

<<Ոչ, սխալմունք կամ վրիպակ չկա. Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի մատակարարման ժամկետը սահմանվել է՝ ելնելով գնման անհրաժեշտությունից՝ պահպանելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1)-ին մասի ը. ենթակետով սահմանված նվազագույն ժամկետի պահանջը>>:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մ.Հայրապետյանին:

Հեռախոս՝ /010/ 511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46 ծածկագրով գնահատող հանձնաժողով: